ԿԱՐԾԻՔ

Կարեն Իսմայիլի Ալավերդյանի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պետության առաջնային հիմնախնդիրներից է, իսկ այդ ռեսուրսների ճիշտ կառավարումը անմիջական ազդեցություն է ունենում պետության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների որակի վրա: Այս գործընթացում մեծապես կարևորվում է ֆինանսական հաշվետվողականության արդյունավետ համակարգի առկայությունը, քանի որ արժանահավատ ֆինանսական տեղեկատվությունը նպաստում է ռեսուրսների ներգրավման ու բաշխման վերաբերյալ արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը:

Ներկայումս ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների շրջանակներում անցում է կատարվել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի:

Համակարգի ներդրման առաջին փուլը հանրային հատվածի կազմակերպությունների առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն էր: Համակարգի ներդրման հաջորդ փուլով նախատեսվում էր համախմբել նախարարությունների ու դրանց ենթակա միավորների ֆինանսական հաշվետվությունները, իսկ վերջին՝ երրորդ փուլը պետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն է: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների վերջնական նպատակը պետության, որպես մեկ տնտեսական միավորի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն է: Ներկայումս ընթացքում է բարեփոխումների՝ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համախմբման փուլը: Այս առումով չափազանց կարևոր է բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով

համապատասխան իրավական ու մեթոդական գործիքների առկայությունը, որով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունն ու անհրաժեշտությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առկա իրավիճակը, բացահայտել իրավական կարգավորման արդի խնդիրներն ու ներկայացնել վերը նշված խնդիրների լուծման և համակարգի կատարելագործման ուղիներ: Ատենախոսությունում տարանջատվել են հետևյալ խնդիրները, որոնք պայմանավորել են հետազոտության տրամաբանությունը և կառուցվածքը.

- Ուսումնասիրել հանրային հատվածի կառուցվածքն ու ներկայացնել դրա հիմնական բնութագրերը,
- Ներկայացնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդական հիմքերը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի զարգացման ընթացքը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առանձնահատկություններն ու ներկայումս ոլորտում առկա մարտահրավերները,
- Ուսումնասիրել հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի ապահովման հարցը՝ դիտարկելով դրանց մշտադիտարկման անհրաժեշտությունը,
- Ուսումնասիրել ֆինանսական հաշվետվությունների համախմբման միջազգային փորձն, ներկայացնել և վերլուծել համախմբման գործիքակազմի ձևավորման առանցքային մարտահրավերները,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրավական կարգավորման համակարգի բացթողումներն ու հիմնավորել գործող մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը,
- Ներկայացնել հանրային հատվածում ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար անհրաժեշտ գործիքակազմը,

- Ուսումնասիրել հաշվեգրման հիմունքով բյուջետավորման առկա միջազգային փորձն ու հիմնավորել դրա կիրառման հեռանկարները ՀՀ-ում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, տրվել են տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթն ու ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տեսական հիմքերն ու առանձնահատկությունները» գլխում հեղինակը ներկայացրել է հանրային հատվածի կառուցվածքը, ինչպես ազգային, այնպես էլ՝ միջազգային կարգավորումների մակարդակում, դրանց հիմնական բնութագրերն ու չափորոշիչները, որոնք ներկայացված են հանրային հատվածի հաշվառման ոլորտում առավել հայտնի երկու մեթոդական հիմունքներում՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներում (ՀՀՀՀՄՍ) և Կառավարության ֆինանսների վիճակագրություն 2014 ձեռնարկում (ԿՖՎ 2014): Առաջին գլխում հեղինակը ներկայացրել է նաև հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի էվոլյուցիան՝ կարևորելով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում հաշվեգրման հիմունքի կիրառումը: Համադրելով և վերլուծելով ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոորտում իրականացվող բարեփոխումների ընթացքը, հեղինակը հիմնավորում է վերը նշված բարեփոխումների՝ ոլորտի միջազգային զարգացումներին համապատասխանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման գործիքակազմը» գլխում ներկայացվել են հաշվապահական հաշվառման գործող համակարգի առանձնահատկությունները: Որպես ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի հիմքունք է նշվել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը, որը հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա մշակված

ազգային մեթոդական հիմունք է: Ներկայացվել են նաև միջազգային ստանդարտների համեմատությամբ ՀՀՀՀՀՀՀՍ-ի հիմնական տարբերությունները, ինչպես նաև համեմատական տեղեկատվությունն է պատրաստվել ՀՀՀՀՄՍ-ների, մասնավոր հատվածի ՖՀՄՍ-ների և ՀՀՀՀՀՀՀՍ-ի վերաբերյալ:

Երկրորդ գլխում հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության պարբերաբար մշտադիտարկման անհրաժեշտությանը: Կարևորելով մշտադիտարկման արդյունքում որակյալ ֆինանսական հաշվետվություններ, հետևաբար նաև արժանահավատ ֆինանսական տեղեկատվություն ստանալու հիմնախնդիրը, հեղինակի կողմից մշակվել և ներկայացվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության պատշաճ մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ մշտադիտարկման ուղեցույց:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման կատարելագործման ուղիները ՀՀ-ում» գլխում հեղինակն անդրադարձել է մի քանի առանձին իրավակարգավորումների, որոնք իր կարծիքով ներկայումս կատարելագործման կարիք ունեն, առանձնացնելով ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության ու մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությունը: Միաժամանակ, առաջարկվել է որակավորված գլխավոր հաշվապահ ունենալու, հետագայում նաև՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանելու նպատակով կիրառել մասնավոր հատվածում կիրառվող մոդելը, այն է՝ օգտագործել ակտիվների հաշվեկշռային արժեքի, բյուջետային ֆինանսավորման ու աշխատակիցների թվաքանակի որոշակի համադրություն: Որակավորումից բացի, կարևորել է նաև հանրային հատվածի հաշվապահների գիտելիքների և մասնագիտական կարողությունների անհրաժեշտ մակարդակի պահպանման ապահովումը, որի հետ կապված հեղինակն առաջարկել է ներդնել պարտադիր շարունակական մասնագիտական զարգացման համակարգ:

Երրորդ գլխում քննարկվել են նաև ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված հիմնախնդիրները, մասնավորապես՝ նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու գործընթացը: Համախմբման համար անհրաժեշտ քայլերից բացի ներկայացվել են այն

հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ են հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար: Հետազոտությունների արդյունքում հեղինակի կողմից մշակվել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդական ուղեցույց: Ատենախոսությանը կից հավելվածները ներկայացված են ըստ յուրաքանչյուր ֆինանսական հաշվետվության, իսկ որպես օրինակ դիտարկվել է մեկ նախարարությունից և երկու վերահսկվող հանրային հատվածի կազմակերպություններից բաղկացած տնտեսական միավոր: Ատենախոսության երրորդ գլխում անդրադարձ է կատարվել նաև հաշվեգրման հիմունքով բյուջետավորման հիմնահարցին: Հաշվի առնելով, որ Հայաստանում, ըստ էության, գործում է հաշվեգրման հիմունքով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համակարգ և դրամարկղային հիմունքի վրա հիմնված բյուջետավորման համակարգ, հեղինակն առաջարկել է դիտարկել տեսանելի ապագայում ՀՀ կառավարության կողմից բյուջետավորման սկզբունքները հաշվապահական համակարգում արդեն իսկ որդեգրված սկզբունքներին համապատասխանեցնելու հնարավորությունը:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում հեղինակն, ամփոփելով հետազոտության արդյունքները, ներկայացրել է դրանցից բխող առաջարկություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՆՈՐՈՒՅԹԸ

Հեղինակի կողմից կատարված հետազոտություններն ու վերլուծությունները, առաջադրված հիմնախնդիրների դիտարկումը հանգեցրել են տեսական ու գործնական մի շարք արդյունքների, որոնցից որպես գիտական նորույթ են ներկայացվել՝

1. ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման նպատակով մշակվել և առաջարկվել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն:

2. Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների անհրաժեշտ մշտադիտարկումն իրականացնելու նպատակով առաջարկվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության մշտադիտարկման ուղեցույց:

3. Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության պահանջն առավել հասցեական դարձնելու նպատակով՝ մշակվել է մեթոդաբանություն, որով կորոշվեն հանրային հատվածի այն կազմակերպությունները, որոնց գլխավոր հաշվապահները պետք է լինեն որակավորված, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունները պետք է հետագայում լինեն հրապարակման ենթակա:

4. Աշխարհի տարբեր երկրներում հաշվապահական հաշվառման և բյուջետավորման հիմունքների համեմատական վերլուծության հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ հանրային հատվածում հաշվեգրման հիմունքով հաշվապահական հաշվառման վարման փաստը, հիմնավորվել է ՀՀ-ում հաշվեգրման հիմունքով բյուջետային պլանավորման անհրաժեշտությունը

5. Հանրային հատվածում գործող հաշվապահների մասնագիտական կարողությունների և գիտելիքների պատշաճ մակարդակի պահպանումն ապահովելու նպատակով՝ առաջարկվել է հանրային հատվածի հաշվապահների վերապատրաստումների վրա հիմնված՝ պարտադիր շարունակական մասնագիտական զարգացման համակարգի մոդել:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում օգտագործվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը վերաբերող հայրենական ու միջազգային հետազոտողների աշխատություններ, միջազգային տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր ու ոլորտը կարգավորող իրավական ակտեր: Հետազոտության տեղեկատվական հիմք են

հանդիսացել նաև ոլորտը կարգավորող մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվությունն ու տարբեր ռազմավարություններ, ինչպես նաև միջազգային ու տեղական մասնագիտական հանրության կողմից կատարված հետազոտություններ:

Ատենախոսության մեջ ներկայացված գիտական արդյունքները հիմնականում հիմնավորված են և բխում են հեղինակի կողմից կատարված ուսումնասիրություններից և եզրահանգումներից: Այս ամենն ապահովել է ստացված արդյունքների հիմնավորվածության և հավաստիության անհրաժեշտ մակարդակը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունը շարադրված է գրագետ, ունի գիտագործնական նշանակություն, սակայն զերծ չէ նաև թերություններից, որոնցից ստորև նշվածները կցանկանայինք առանձնացնել դիտողությունների տեսքով.

1. Աշխատանքի 3.1 բաժնում առաջարկվել է գլխավոր հաշվապահ աշխատելու համար հաշվապահի որակավորման պահանջ ունեցող Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը սահմանել, հիմք ընդունելով հետևյալ ցուցանիշներից երկուսի համակցությունը՝ նախորդ տարվա արդյունքներով բյուջետային ֆինանսավորման գումարը գերազանցել է 400 մլն. դրամը, վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 200 մլն. դրամը, աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 100: Այդ առումով լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն ունեն ընտրված ցուցանիշների սահմանաչափերը: Ինչպես նաև հանրային հատվածի կազմակերպությունների հաշվետվողական համակարգի մշտական բարելավման նպատակով, ցանկալի կլիներ ներկայացվեր և հիմնավորվեր վերը նշված ցուցանիշների սահմանաչափերի աստիճանական իջեցումը:
2. Հետազոտության 3-րդ գիտական նորույթի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության պահանջն

առավել հասցեական դարձնելու նպատակով՝ մշակվել է մեթոդաբանություն, որով կորոշվեն հանրային հատվածի կազմակերպությունները, որոնց գլխավոր հաշվապահը պետք է լինի որակավորված, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունները պետք է հետագայում լինեն հրապարակման ենթակա: Նշվածի վերաբերյալ հարկ է ընդգծել, որ ատենախոսությունում բավարար չափով անդրադարձ չի կատարվել ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջին և դրա փոխկապակցվածությանը որակավորման դրույթին:

3. Ատենախոսության 2.2 բաժնի համաձայն, հաշվի առնելով հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման յուրահատկությունն ու հաշվառման աշխատանքների բարդությունը, սկզբնական ժամանակահատվածում մշտադիտարկումը կարող է չներառել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ուսումնասիրությունը: Սակայն կարծում ենք, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները մշտադիտարկման չենթարկելու հեղինակի առաջարկությունը:
4. Աշխատանքը կշահեր, եթե անդրադրած կատարվեր նաև հանրային հատվածում հաշվապահական հաշվառման աշխատանքները կազմակերպելու հարցերին, մասնավորապես՝ կենտրոնացված, ապակենտրոնացված և արտապատվիրակման տարբերակներին: Դա հնարավորություն կտար գնահատել պետության համար հավելյալ արժեք ապահովող նախընտրելի տարբերակը՝ ֆինանսական և որակական առումով լավագույն համակցություն ստանալու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները անկասկած չեն նսեմացնում հետազոտության արժանիքները, դրանք հիմնականում հետապնդում են ատենախոսությունում քննարկվող հիմնահարցերի հետագա ուսումնասիրությունների խորացման և բարելավման նպատակ: Ընդհանուր առմամբ, Կ. Ի. Ալավերդյանի թեկնածուական ատենախոսությունը ունի գիտագործնական նշանակություն և արժանի է բարձր գնահատականի, բերված եզրահանգումները, մեթոդաբանական մոտեցումները և գործնական առաջար-

կությունները կարող են օգտակար լինել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի հետագա կատարելագործման համար:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

«ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակ Կարեն Իսմայիլի Ալավերդյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու **Ա. Մ. Գալստյան**

Ա. Մ. ԳԱԼՍՏՅԱՆԻ ստորագրությունը
հաստատում եմ՝
ՀԱԱՀ գիտական քարտուղար,
գ.գ.թ., դոցենտ **Գ. Վ. Ավագյան**

26.հոկտեմբերի 2020թ.